

Կողզուանէ 10—11 ժամ յարեելս (սակաւ ինչ շեղուած արեւելեան հարաւ) Կողբ զնալու համար Երասխի աջ ափին վերայ իրարմէ 2—3 ժամ հեռաւորութեամբ Ռեւ բուք (դիւսայ հարս) Բուլանխ, ինձէ, Փառնակուտ զիւզօրեից Լէն, պիտի պատահինք, ուստի 1 ժամ շարունակելով կը պատահինք Կարմիր քարափ կոչուած մեծ ժայռին, որ կայ Երասխի աջ եզրը, այս ժայռի գլուխը տեսայ մի բերդ, բերդի միջից ընդարձակ ախան մի կոփուած էր ցյատակ Երասխայ, այս բերդն Ղըզզուլէ կը կոչուի, աստի 1 1/2 ժամ հարաւ զնալով Կողբ կը մտնենք:

Չածչայ, Մերկեմիր, Թանդուրակ և Սինակ լեռներէն ի հիւսիս ջրեր իջնալով՝ յիշեալ զիւղերու անունով Երասխ կը թափին:

Վարդէմարզ ջուրն Թաքալթուի (Բարթող) կողմէն կիջնայ, Կողբայ քաւշանի մէջ երկուքի բաժանած են, որոց մինը ի հիւսիս Կողբայ միջից կանցնի և արտերն կը ջրէ, իսկ երկրորդն ի հիւսիս արեւելս շարունակելով՝ մի ժամ յետոյ Սինեկայ լեռներէն իջնող Ագրակ կամ Գանձակ անուն կրող ջրին միանալով՝ կանցնի Չնչաւատ զիւղի արեւելեան եզրն քերելով և Սուրմալու զիւղի մօտ Երասխ կը թափի:

Կողբ ունի 1000 տուն հայ բնակիչ, մէջը և շուրջը ունի շատ ուխտաւայրեր. Կողբայ հին թաղը, որ խոնարհ կը գտնուի, ուր են Եզնիկ հայրապետի և Ս. Լուսաւորչի մատուռներն, որք բոլորովին անխնամ վիճակի մէջ են. կայ այս տեղ Թուխ Մանուկ և Ս. Գէորդ ուխտաւայրերն, որոց մին զիւղի յարեւելս՝ աղահանքի ստորոտն, երկրորդն որոյ յարեւելս՝ աղահանքի գաղաթն, բաց ի աստի կան զիւղիս մէջ երկու եկեղեցի: